

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

grakanagetgasparyan@gmail.com

0009-0004-7317-4535 

DOI: 10.54503/1829-4073-2025.2.158-179

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՄ՝ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԱՍՏԾՈՒ ՀԱՅԱՑՔԻ ՆԵՐՔՈՒ

Ամփոփում

Եղիշե Չարենցը հեղափոխության, հայրենիքի փրկության ճիգերի ու գրական-քաղաքական պայքարի միջով եկավ հասավ Աստծու գաղափարին: Այս ճանապարհը նա անցավ՝ թափանցելով հոգևոր այնպիսի ոլորտներ, որտեղ Կոմիտասն էր, որտեղ հայ ու համաշխարհային գրականության դեմքերն էին՝ Գրիգոր Խլաթեցի Ծերենցը ու Գրիգոր Նարեկացին, Շեքսպիրն ու Դանտեն...

Չարենցը՝ մուսաների որդին էր, երբեմն անգամ Անառակ որդու երևույթով, շատ լավ գիտեր, որ «Եվ ճանապարհ չկա տառապանքից ուղիղ»:¹ Ամբողջ մի կյանք ծանր փորձությունների միջով անցնելով, ընկնելով հաճախ և բարձրանալով նորից՝ իր խաչը շալակած գնաց Աստծուն ընդառաջ. սպունգով Հիսուսին մոտեցրած քացախի փոխարեն, Երևանի բանտում մեկուսացած, խմեց իր ձեռքով պատրաստած թեյի դառն ու թունդ թանձրուք, իսկ շուրթերին խաչված Փրկչի նույն խոսքերն էին՝ «Տե՛ր, մի լքիր դու ինձ»: Եվ Տերը չլքեց. Ծնունդի ու Հայտնության բերկրանքը պարզևողը նրան շնորհեց նաև Հարության ու Վերածնունդի հրաշքը...

Բանալի Բառեր՝ *Եղիշե Չարենց, Կոմիտաս, Գրիգոր Խլաթեցի Ծերենց, Գրիգոր Նարեկացի, Աստված, Տեր, հավատ:*

* Հոդվածը ներկայացվել է 26.04.25, գրախոսվել է 22.07.25, ընդունվել է տպագրության 29.08.2025:

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

¹ **Չարենց** 1983, 589:

Ներածություն

1935–1937 թթ. Չարենցը հայտնվել էր քաղաքականապես անվստահելի գրողների շարքում: Նրան ենթարկում էին հարցաքննությունների, նվաստացումների և հրապարակային քննադատության:

Չարենցի անտիպ ժառանգությունն ընդգրկում է այդ նույն 1935–1937 թթ., որոնց հիմնական բովանդակությունը քաղաքական հալածանքների սաստկացումն է ու ստեղծագործ միայնակ անհատի ողբերգությունը: Թեև ծալված վերահսկող գործակալի հետապնդումների զգացողությունն իր մեջ երբեք չի լքել նրան, բայց և գիտեր, որ ինչ գրում է, արդեն գրում է միայն իր ու հեռակա կարգով ժողովրդի ու դարերի համար, որովհետև պաշտոնական գրաքննադատությունը մամուլում, գրական ու կուսակցական որոշումներում, կուսակցական և ոչ կուսակցական ժողովներում հալածում էր նրան, բայց սողացող գրաքննությունը այլևս մուտք չունեի գոնե իր անտիպների աշխարհ, քանի որ ինքն արդեն վտարված էր հրատարակչությունից ու գրողների միությունից և իրեն այլևս չէին տպագրում: Նրա մեծ դժգոհությունը ներկայացնող այս բնույթի երկերում կան և՛ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ, և՛ առանձին հիշարժան գրառումներ: Կյանքի և իրականության չափման միավորն այստեղ այլևս միայն և միմիայն հեղափոխությունը չէր, այլ դրանից վեր հավերժական ժամանակը, ուր լիարժեք Չարենցն էր՝ խորապես ազգային ու համամարդկային բանաստեղծը, նա՛, ում նմանով կարող էր հպարտանալ մի ամբողջ ազգ, անգամ՝ նրանից դաղված Դաշնակցությունը, բայց ոչ երբեք բոլշևիկյան վարչակարգը, նրա՛նք, ովքեր Չարենցի պես հանճարին գիտակցված գործողություններով միաբերան տվեցին մահու բերան՝ ուրանալով նույնիսկ հեղափոխության բանաստեղծի նրա ռոմանտիկ պոռթկումները:

Ահա այս անտիպ ժառանգության մեջ Չարենցն է իր անձնական ողբերգությամբ, հայոց պատմությունն է, նրան շրջապատող գրական ու քաղաքական միջավայրն է և, ի վերջո, Աստծու ներկայությունն է՝ որպես հայտնություն. ամեն տեսակի քաղաքական սադրանքներից ու հալածանքներից հետո Չարենցը հասնում է իր հավատի, այսինքն՝ հոգեփրկության վերջին սահմանին՝ Աստվածահայտնությանը...

Բոլորից լքված բանաստեղծը նախ կանգնում է ինքն իր առաջ. ի վերջո, 1935–1937 թթ. ահագնացած այս մարդամթերման մեջ ո՞վ է ինքը՝ ծաղրածո՞ւ, թե՞ հերոս, զո՞հ, թե՞ հաղթող: Իսկ առջևում ոչ միայն իրեն ու իր նման-

Գասպարյան Դ.

ներին ուղղված քաղաքական լկտի քամահրանքն էր, այլև նյութական անապահովությունը, երբ ստիպված պիտի գրքերն ու գրապահարանները վաճառեր:

Իր նմանները նաև իր հետևորդներն էին, մեծ հաշվով իր շուրջ համախմբված աշակերտները, որոնց ևս ամեն կերպ փորձում էին հանել նրա դեմ: Այդպես սեպ խրեցին նրա ու Բակունցի բարեկամության միջև, նրա դեմ հանեցին փայփայած սանին՝ Մկրտիչ Արմենին, և վերջինս ստիպողաբար մեղադրեց Չարենցին: Իսկ գրական հակառակորդների հասցրած քաղաքական մեղադրանքները հաջորդական էին ու անընդմեջ:

Հոգեկան այս մեծ ալեկոծությունն ու բարեկամների փորձությունն ունեցան նաև իրենց բանաստեղծական զայրալից անդրադարձները՝ «Կոչված եմ այսօր ահա ես Չեկա...», «Ներքող երգողներին (Ինձ՝ Խ. Գ. Մ-ից վտարելու առթիվ)», «Մեր նոր ճորտերին», «...Պետությունն՝ ամբողջ իր ապարատով»... Բոլորն էլ գրված են միևնույն օրը՝ 1935 թ. ապրիլի 14-ին: Սրանք որքան գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ, նույնքան էլ իրական կենսագրական վավերագրեր են.

Պետությունն՝ ամբողջ իր ապարատով
Ելել է ահա... մի պոետի դեմ,–
Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ
Ու չհիանամ իմ «բիրտ» սֆաթով,–
Եվ... զարհուրելի իմ ուժով հպարտ,–
Չբացականչեմ՝ «– Հերո՛ս եմ ու մարդ!!!»:²

Նույն այս մղձավանջային օրերին, ավելի ստույգ՝ 1935 թ. մարտից Չարենցի պոեզիայում աստիճանաբար խորանում են զառանցական տեսիլները: Քաղաքական բռնությունը ներկայանում է տարբեր պատկերներով ու կերպարանքներով՝ ցնորական տեսիլներ, զառանցական հոգեզալարքներ, քիմեոներ... Անգամ՝ ոչ թե զառանցանք, այլ կրկնակի խորացում՝ «Չառանցանք զառանցանքում»... Ահա դրանցից մեկը՝ «Չառանցանք».

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման կապկի,
Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր...
Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին–
Եվ անունը նրա... «Քնքշություն» էր...:³

² Չարենց 1996, 89:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

Ահա այս պայմաններում նրան փրկության եկան այնպիսի երկնային ուժեր, որոնց անուններն են՝ Կոմիտաս, Գրիգոր Խլաթեցի Ծերենց, Գրիգոր Նարեկացի և Աստված: Չարենցի թիկունքին իրենց ձեռքը դրեցին նաև Շեքսպիրն ու Դանտեն: Խմբագրեց և թարմացրեց Շեքսպիրի՝ Հ. Մասեհյանի կատարած թարգմանությունը, մտադիր էր նորովի թարգմանել: Իսկ Դանտեն նրա ուղեկիցն ու առաջնորդն էր «Մահվան տեսիլ» պոեմում:

Կոմիտաս

1935 թ. հոկտեմբեր 22-ին Կոմիտասի մահվան լուրը ցնցում է Չարենցին: Այդ զգացողության արտահայտությունն է «Կոմիտաս» պոեմը: Աղավնի Մեսրոպյանը տեսել է ձեռագիրը և նկարագրել՝ կապույտ թանաք, սպիտակ ընտիր լայն թուղթ: Չարենցն ասել է. «Հույս ունեմ, որ շուտով կավարտեմ»: Նրա «Կոմիտաս» և «Կոմիտասի հիշատակին» պոեմները տարբեր ստեղծագործություններ են, միևնույն ներշնչանքի տարբեր արտահայտություններ: Ահավասիկ. «Կոմիտաս»-ը.

Քայլում է մեռյալ դաշտերի և մեռյալ ձայների Մարգարեն
Քայլերով ահեղ, լայնաձիգ՝ լուռության մտրակով քշված:
Հայացքները որպես բևեռներ՝ խրելով հեռուն այն քարե՝
Դաշտերի Հիսուսի նման՝ նրա մեջ մանկության՝ պես նշված:

Բայց եզերքն այս ցուրտ, անհաղորդ, հարթավայրն այս, որ կոխում է նա

Իբրև տուն դարձող տարագիր – այնքան հա՛մր էր արդյոք նա առաջ...

Ոչ... Գյուղի քարերով քշված, իբրև շուն՝ ծեծված անխնա,-

Փախչելով լսում էր և երգ, և ծիծաղ, և թռչնի թևերի շառաչ...:⁴

1936 թ. մայիսի 27-ին Կոմիտասի աճյունը հայրենիք տեղափոխելու այդ անձրևոտ գարնանային օրն իսկ Ե. Չարենցը սկսում է «Կոմիտասի հիշատակին» պոեմի նախնական տարբերակը՝ «Հայրենի երգն ես դու մեր // Վերադարձած հայրենիք...»:⁵ Շարունակել է աշխատանքը մինչև նույն տարվա նոյեմբերի 30-ը՝ Հայաստանի խորհրդայնացման օրվա գիշերը: Ստեղծել է պոեմի երեք տարբերակ. նախնականից բացի, կա միջին 400 տողանոց

³ Չարենց 1983, 95:

⁴ Չարենց 1996, 11–12:

⁵ Չարենց 1983, 612:

Գասպարյան Դ.

տարբերակը, որ տպագրվեց 1954-ին, դրան հաջորդել է ավելի ընդարձակ տարբերակ՝ 142 ութնյակ: Առայժմ վերջնական համարվող տարբերակը նկարագրված և թվագրված է. «Գրված է իննսուն և վեց (96) թերթիկի վրա՝ ընդամենը հարյուր քառասուն և երկու (142) ութնյակ, թվագրված Ա-ից մինչև ՃԽԲ... սկսված է 30.V.1936 թ., ավարտված՝ 30.XI.1936 թ.»։ Գրի է առել վերնագրի 15 տարբերակ:⁶ Առանձին ութնյակներ ունեն մի քանի փոփոխակ:

Ակիգբը.

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք:–
Դեմքիդ տանջանքն է դրել
Անագորույն մի կնիք:–
Եվ հանճարի հեռակա
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին:⁷

«Անձրևն եկավ շաղալեն» երգի տողը մի յուրահատուկ ստեղծագործական հոգեվիճակ է ստեղծել նրա մեջ, դարձել առաջին և երկրորդ տարբերակների զգացական շաղախը, ստեղծել որոշակի կշռույթ, ինչն էլ ընկած է պոեմի տաղաչափության հիմքում: Փաստորեն ժողովրդական երգը խորքից ձև ու չափ է տվել նրա համանվագին:

Առաջին երկու տողերը բանաստեղծը դարձրեց երրորդ տարբերակի բնաբան և հայրենական հանճարի կերպարը կերտեց փիլիսոփայական այս հայեցակետով.

Ա՛խ, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի հաճախ ճանաչում,
Բայց սերմն հոգու միայն իր
Հայրենիքում է աճում...:⁸

Կոմիտասը նրա համար դառնում է Հայոց եղեռնի, հայրենի հողի, հայոց ոգու, հայրենական հանճարի, համատարած հայրենիքի խորհրդանիշ և

⁶ Տե՛ս **Չարենց** 1983, 612–613:

⁷ **Չարենց** 1983, 305

⁸ **Չարենց** 1983, 313:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

հայության ճակատագիր՝ ժողովուրդը պետք է հավաքվի ու համախմբվի հայրենիքում. որոշակի արտահայտություն է ստանում «Պատգամ»-ի «...քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» գաղտնագիրը.

Հալածակա՛ն որպես քո
Ո՛ղջ ժողովուրդն այն պահին
Խելակորույս քո ոգով
Չտրվեցի՛ր դու Մահի...
Ո՛չ – չմեռա՛ր այնժամ դու,
Այլ սարսափից խելագար՝
Երազեցիր դառնալ տուն,
Որ աշխարհում էլ չկար... <...>:

Վերադառնա՛ն պիտի դեռ
Հայրենի հողը բուրյան՝
Իբրև նորո՛գ երկրի տեր՝
Ե՛վ Թումանյան, և՛ Տերյան:–
Շիրիմներից իրենց որբ
Իրենց դարձին են նայում
Ե՛վ Դուրյանի սիրտը բորբ,
Ե՛վ Մեծարենցն հմայուն:–

...Միջագետքից – Օրենբուրգ,
Հելեսպոնտից մինչև Վան,–
Ո՛ր աշխարհում արդյոք սուրբ
Չկա մասունք նայիրյան...
Ո՛ր ափերով աշխարհի
Քո մերկ ոտքերը չանցան,–
Օ՛, նայիրյան հանճարի
Հազարամյա Սերմնացան...:⁹

1936 թ. մայիսի 28-ին հայրենի հողին է հանձնվում Կոմիտասի (8/26.X.1869, Քյոթահիա – 22.X.1935, Փարիզ) աճյունը: Փարիզից սփյուռքահայ 1.800 ներգաղթյալների հետ Կոմիտասի աճյունը հայրենիք են փոխադրում «Սինեյա» շոգենավով, խմբի մեջ էին Երվանդ Քոչարը, Լևոն Հարություն և նշանավոր այլ դեմքեր:

⁹ **Չարենց** 1983, 311, 342:

Գրիգոր Ծերենց հլաթեցի

1937-ին Չարենցը գրում է «Մի ծեր վանական» պայմանական վերնագրով պոեմը: Ամենայն հավանականությամբ մտահղացել, գուցե նաև սկսել է Կոմիտասին նվիրված պոեմից հետո: Սակայն այս պոեմը ոչ մի կերպ չի կապվում Կոմիտասի հետ, ինչը ենթադրել և անորոշ մեկնաբանություններով իր մոտ պահվող ինքնագրերից առանձին պատառիկներ է հրատարակել Ան. Չարենցը:¹⁰ Տողատակին ծանոթագրված է՝ «Ձեռագրի սկզբի 27 էջերը չեն հայտնաբերված»:

Խառը ինքնագիր սևագրությունը՝ ուղղումներով և տարբերակներով մեր աշխատասիրությամբ տեղ է գտել «Գիրք մնացորդաց»-ում:¹¹ Պայմանական վերնագրերով հայտնի այս երկու նյութերը մեկ ամբողջի մասեր են, որի մաքրագիր տարբերակը թերևս հայտնաբերվի:

Ամեն ինչ տանում է դեպի միջնադար՝ Գրիգոր Ծերենց հլաթեցու (1349–1425) նախակերպար՝ որպես ժամանակի վկա ու պատմիչ: Առաքել Բաղիշեցին (մոտ 1380-ական թթ. – 1454) իր իսկ վկայությամբ աշակերտել է Գրիգոր Ծերենց հլաթեցուն, ով եղել է Սուխարա և Ցիպնա վանքերի առաջնորդը:

Առաքել Բաղիշեցու «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգոր վարդապետի հլաթեցոյ» տաղը գրված է Գրիգոր Ծերենց հլաթեցու սպանության առիթով, որը տեղի է ունեցել 1425 թ.: Այդ կապակցությամբ է գրված նաև «Այնքան որդիք են մարմնական» սկսվածքով տաղը:

Ա. Բաղիշեցին հլաթեցուն նվիրել է նաև արձակ գործեր: Իսլաթեցին եղել է ոչ միայն Բաղիշեցու ուսուցիչը, այլև իր ժամանակի ամենահայտնի եկեղեցական գործիչներից մեկը, գիտուն և ուսյալ մի վարդապետ, ով, իր հերթին, Գրիգոր Տաթևացու հետ մեկտեղ Տաթևի համալսարանում աշակերտել էր Հովհան Որոտնեցուն: Իր ներբողական եղերերգության մեջ Բաղիշեցին հլաթեցուն բնորոշում է որպես «քաջ ռաբունի», համարում իր ռաբունապետը, իր ըղձալի խրատատուն, ներկայացնում է որպես «խրատիչ քանոն ամենայնի», որպես սրբակրոն մի հոգևորական: Նա Գ. Իսլաթեցուն այնքան բարձր է գնահատում, որ նմանեցնում է Գրիգոր Լուսավորչին և Մեսրոպ Մաշտոցին: Նկատի ունենալով, որ Իսլաթեցին ծնունդով Քաջբերունիքից էր, Բաղիշեցին նրան ան-

¹⁰ Չարենց 1973, 23–39:

¹¹ Չարենց 2017, 109–134:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

վանում է Գրիգորիոս Բզնունի: Նրա մահը քրդերի արշավանքի ժամանակ ներկայացնում է այսպես.

Եկեալ հասին վաղվաղակի
Ազգն Մարաց, որ Քուրդ կոչի.
Սպանին զհայրն ցանկալի,
Ի Տիպնավանքն երեւելի:

«Ջահն շիջաւ նոր Սիոնի», «Ռաբունապետ Հայոց ազգի», «Շնորհազարդ տանն Հիսուսի // Դու գանձապետ իմաստիք լի», - ահա այսպիսի արտահայտություններով է նա շարունակում իր եղերական ներբողը՝ միաժամանակ և՛ ողբալով նրա մահը, և՛ փառաբանելով նրա անունն ու հիշատակը:¹²

Լենկ Թեմուրի արշավանքների տարիներն են: 1387, 1394, 1399 թվականներին Լենկ Թեմուրի արշավանքներն ավերել էին Հայաստանը՝ թողնելով բազմաթիվ զոհեր, տանելով բազմաթիվ գերիներ: Հարվածի նոր ալիքը գալիս է թյուրքական ցեղերից, որոնց հարաճուն գրոհներից ու պատերազմներից հետո 1453 թ. ընկավ քրիստոնյաների համար փրկության պատվար հանդիսացող բյուզանդական ինքնակալության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Նվաճողների առաջնորդ Մուհամեդ Բ սուլթանն այն վերանվանեց Իսլամպոլ: Մինչ այդ սկիզբ առած Հայաստանի ժողովրդագրական քայքայումն է՛լ ավելի խորացավ: Նոր թափ առավ պանդխտությունը: Հայաստանը վերջնականապես մեկուսացվեց արտաքին աշխարհից:

Միջնադար, ավերակ վանք, ամայություն, մոմի աղոտ լույս, մգլահամ խավար, աղոթքի չոքած ծեր վանական, ով վանքում ննջեցյալի համար գիշերով կանգնում է հսկումի և սպասում փոխարինողի, խորշակյալ արտեր, ծերն աղոթում է, որպեսզի անձրև տեղա, ռամիկների խարխուլ խուլեր, սայլեր, եզներ, գոմեշներ: Չարենցը հավանաբար արձանագրել է ճակատագրական պահը. հսկումի կարող էր կանգնած լինել ծերացած աշակերտը սպանված և արդեն ծեր 76-ամյա ուսուցչի համար:

Գրիգոր Նարեկացուց դեպի Տեր Աստված

Գրիգոր Նարեկացու միջոցով Չարենցը հասավ Աստծուն, այդ իսկ պատճառով չենք առանձնացնում: Նարեկացին Աստծու երկրային դեսպանն էր:

¹² Առաքել Բաղիշեցի 1971, 108:

Գասպարյան Դ.

«Ես եմ ճանապարհը»¹³, Հովհաննես Ավետարանչի բերանով ասվում է Տիրոջ խոսքը, որին Չարենցը արձագանքում է մի ամբողջ «Գիրք ճանապարհի» վերնագրված գրքով և դրան հաջորդող կյանքով ու կողմնորոշումով: Տիրոջ ճանապարհի որոնումն այդուհետև Չարենցի համար դարձավ ներքին ծրագիր և նրան տարավ դեպի Աստված, ում ասում էր Տեր...

«Թովմասը նրան ասաց. «Տե՛ր, չգիտենք, ուր ես գնում, ուրեմն ինչպե՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը»: Եվ Յիսուս նրանց ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով»:¹⁴

«Ես եմ ճանապարհը», - իր ժամանակի գրական անհավատների մեջ ամենայն իրավունքով կարող էր ասել Չարենցը և քարկոծվել, ինչպես որ եղավ... 1935 թ. մարտից Չարենցի պոեզիայում աստիճանաբար ուժգնանում են ոչ միայն զառանցական, այլև բուն հոգևոր տեսիլները: Նա մեկ թափանցում է աստվածաշնչյան մոտիվների մեջ՝ «Բանք Ժողովողի», ոգեկոչում գաղափարներ ու կերպարներ, հավատաքննիչների վերադարձող միջնադարին ավելանում է նախնադարը՝ մարդ-կապիկը, («Էկլեզիաստես»), մեկ խորանում հայ միջնադարի մեջ՝ Նարեկացի, և, որպես Աստծու, դիմում նրան («Ինչպես հնում վկան այն՝ Նարեկացին»), մեկ ուրվագծում տառապանքի խաչը շալակած և Քրիստոսի պես Գողգոթա բարձրացող տանջահար կերպարներ՝ Գրիգոր Ծերենց («Երբ բարձրանում է նա վեր» – «Մի ծեր վանական»), մեկ տրվում աղոթքների («Իմ լերան աղոթքը», «22.X.1936»¹⁵ «Վերջին աղոթք»):

Դեպի Նարեկացի ու Աստված Չարենցը գնաց Կոմիտասից ու Ծերենցից հետո՝ միևնույն ոգեշնչվածությամբ: Սա հոգեբանական հերթական, բայց արդեն իսկ վերջնական վերափոխման ժամանակ էր:

1936 թ. դեկտեմբերի 6–8-ը Չարենցը գրում է «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապտիքոսը. չորս սոնետ՝ Նարեկացու կերպարի ոգեկոչմամբ և Արարչին ուղղված խոսքով: Դեպի Աստված տանող ճանապարհի սկզբում Տիեզերական վարդապետ Նարեկացին էր.

Ինչպես դարեր առաջ – վկան Նարեկացի, –
Քեզ եմ հղում ես ողբըս, ո՛վ Արարիչ,

¹³ Տես՝ **Չարենց** 1978, 82–86:

¹⁴ Նոր կտակարան, 1981, 295, գլ. ԺԴ, 5–7:

¹⁵ **Չարենց** 1983, 186, տպագրված է «23.X.1936»:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

Ես՝ մեղսավոր քերթողըս աստվածարյալ դարի,–

Ողջակիզյալ արյունս վարակածին:

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի

Մայրամուտի փոխվեց արյունալիճ.–

Ուր մեր Ա՛րևն է նոր սուզվում արյունալի,

Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Նարեկացու առիթով հոգևոր նշանակությամբ Չարենցը հաճախակի օգտագործում է *վկա* բառը, որ այստեղ նշանակում է «Կրոնի համար նահատակված մարդ, նահատակ, մարտիրոս»:¹⁶

Չարենցի Քրիստոսը քողարկված է, ներսում է, աղոթքի պես գաղտնի. մի պահ ինքը դառնում է նրա կրկնօրինակ-նմանակը, որի ոչ միայն ձեռքերն ու ոտքերն են գամված խաչին, այլև ամբողջ մարմինն է մեխված քաղաքական իրականության խաչափայտին:

1937 թ. մարտի 1-ի առավոտյան բանաստեղծը գրառում է անում «Չարչարանաց լեռան աղոթքը» վերնագրով (պահպանվել է քայքայված վիճակում) և Աստծուց խնդրում շնորհք ու կորով՝ «...մերժելու մութ խոսքերի, գաղտնահնչյուն բառերի նույն չնչին խոհն – հաճախ – բյուր կողմերից խուժող պատկերների, <...>, ուստայնների պես անվերջ եկող» բառերի գայթակհությունը՝ «ետ մղելու, ջոկելու, զոհելու, անցնելու դիերի վրայով»:

«Վարժիր ինձ անընդհատ ամենօրյա անկարելի զոհաբերության,– ընտելացրու այն մտքին, օրենքին՝ որ կյանքը ինքը, գոյությունն ինքը՝ անընդհատ, ամենօրյա ընտրություն է՝ մահ անվերջանալի: <...> ...և այս է հանճարների մեծագործությունը՝ նրանց չարչարանաց լեռը, որ հասցնում է մինչև աստղերը, մինչև ոգու նոր տիեզերքներ, կազմակերպելու՝ ոգու սիզիֆյան տքնությամբ անընդհատ խուժող նոր խոհերը ետ մղելով – սակայն և ընտրելով լավագույնը – ստեղծել հնարավորը – предельно возможный լավագույն ընտրությամբ»:¹⁷

Խոսքը հանուն կատարյալի «Սիզիֆյան տքնությամբ անգամ» «ոգու նոր տիեզերքների» հասնելու մասին է: Հանճարն իր խոհերի մեջ Աստծու հետ է խոսում, իր ոգեղեն խոսքի մաքրությունն ու կատարելությունն է ճշտում, իսկ դրսում նրան վերացնելու տարբերակներ էին քննարկում...

¹⁶ Աղայան 1976, 1394:

¹⁷ Չարենց 1983, 477–478:

Գասպարյան Դ.

Եվ նույն օրը շարունակում է. «Չկա ավելի ամեհի պատիժ, քան այն, երբ մարդու դատապարտում են իբրև դավաճանողի մի գաղափարի դեմ, որը հենց նրա միակ սրբազան և միակ – նրա կյանքի միակ գործն ու իմաստը կազմող – գաղափարն ու գործն է, և չկա ոչ մի միջոց այդ «հասարակ» լույսի պես պարզ ճշմարտությունն ապացուցելու: Քանզի չկա տանջանք ավելի մեծ,– և պատիժ ավելի սև,– քան դատել մարդուն՝ նրա սրբազան գաղափարի, նրա ողջ կյանքի միակ գործին դավաճան լինելու համար»:¹⁸

Չարենցի համար Նարեկացին եղել է «լուսապսակ ճակատ», միջնադարյան դպրության պետ, ազգային բարձրագույն հանճարի խորհրդանիշ: Նարեկը եղել է նրա սեղանի գիրքը: Հիմա էլ Չարենցի տուն-թանգարանում պահվում է «Նարեկի» հնագույն մի հրատարակություն (Վենետիկ, ս. Ղազար, 1851)՝ բազմաթիվ նշումների հետքերը վրան: Նարեկացին տևական ներկայություն է ունեցել Չարենցի ստեղծագործական կյանքում, ինչն ավելի խորացավ հատկապես «Գիրք ճանապարհի»-ի գրության ժամանակ և հետո:

Մինչ այդ, նա իր «Էպիքական լուսաբաց»-ը 1930 թ. հունվարի 5-ին ընծայագրել էր Բակունցին՝ «Սիրելի Ակսելին, միակ բարեկամիս», «Մատյան ...»-ից (բան Բ, Գ) վերցված այսպիսի ուղերձով. «Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝ /Իբրեւ ապաջան սերմանող անբերրի երկրի»:

Նարեկացու ոգին նախ՝ առարկայացավ Չարենցի բառապաշարի ու մակդիրակիր բառապատկերների մեջ: Դա լավագույն ձևով արտահայտվեց «Մահվան տեսիլ» (1933) և թերի պահպանված «Կոմիտաս» (1935) պոեմների մեջ: Ահա օրինակներ «Մահվան տեսիլ»-ից. արեգակնական հանճար, հանճարափայլ պարզև, զարհուրյալ հայացք, ժանգաժանգ, անփայլ և գոսնական տեսիլ, դառնաղետ նվագ, անկոբար դառնություն, արյունոռուտ դեմք, ռազմաճիչ երգեր, դիվահար ամբոխներ: «Կոմիտաս» պոեմում դա նկատելի է պատկերների մեջ (տե՛ս Կոմիտասին նվիրված հատվածում):

Դեպի միջնադար (Սարկավագ Բերդակցի, Աստվածատուր), ինչպես նաև դեպի Նարեկացի՝ բառակազմական, հանգային (հնչյունական) շղթայակապի ավանդույթներով հարուստ է նաև «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմը (1932): Բառապատկերներից առանձնացնենք հետևյալները՝ մեծահանդես արվեստներ, քարաքանդակ քաղաքներ, «Շահատակողներ ժանտաղաժան. / – Թեմուրլենկ՝ չարաչք ու չարաժանտ...» և այլն: Իսկ «Ճարտար

¹⁸ Չարենց 1983, 261:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

ճորտեր»-ը Նարեկացու «Այն ճորտն ճոճ էր և ճապուկ» արտահայտության անդրադարձն է:

Ժխտելով այն ամենը, ինչ անցյալինն է, անցյալի մեջ գնահատելով հանդերձ միջնադարի մեծերին, այնուամենայնիվ զարմանալի մի անցումով Չարենցը հենց նրանց է ուղղում այդպիսի խոսքեր.

Օ՛, մռայլախոս դպիրներ սև՛,-
Դո՛ւ, Շնորհալի՛, և դո՛ւ, Նարեկ՛,
Դո՛ւք- պատան մտքի, դու՛ք անարև,
Որ սրտի համար դարե՛ր, դարե՛ր
Կերտել եք դագաղ- պատյան քարե,
Եվ ոգու համար դժնյա տառեր:¹⁹

Չարենցն այստեղ գեղջուկ երգը, ռամիկ հանգը հակադրում է հոգևոր երգին և, ժամանակի պահանջներից ելնելով, նախապատվությունը տալիս առաջինին: Աշխարհիկ գրականությունը բարձրացնելու և հոգևոր-եկեղեցականը քննադատելու՝ ժամանակին շատ սուր բնույթ ընդունած պայքարը Չարենցի ստեղծագործության մեջ արտահայտվել է այդպես, թեև նույն ժամանակի մեջ նրան քննադատեցին միջնադարյան բառապաշար, անգամ՝ «դպրություն» բառը օգտագործելու համար: Առաջանում է յուրահատուկ մի հակադրություն. Չարենցը ժխտում է միջնադարը՝ օգտագործելով միջնադարյան բառազանձ, բանաստեղծական ձևեր ու հնարքներ:

Արդյո՞ք այդ ժխտումը Չարենցի էությունն էր: Ստեղծագործական հետազա քայլերը բարձրագույն աղաղակում են՝ ո՛չ: Դրա արտահայտությունը, ինչպես նշեցինք, առաջին հերթին Նարեկացու «Մատյան...»-ի գլուխների վերնագրով հայտնի «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապտիքոսն է, այսինքն՝ չորս սոնետից կազմված քառամաս բանաստեղծությունների շարք: Այստեղ, ինչպես Նարեկացին՝ Արարչին, այնպես էլ Չարենցը՝ Առաջնորդին, սրտի խորքից խոսք է հղում՝ տագնապելով իր ճակատագրի համար.

Մի՞թե իրոք այսօր ես դուրս մնացի
Քո արևից, երկրից, ժողովրդից անեզր,-
Չէ՞ զառանցանք արդյոք սա.
Առաջինն ո՞վ երգեց գովքը Այգաբացիդ:²⁰

¹⁹ **Չարենց** 1968, 299:

Գասպարյան Դ.

Այս սոնետի գրության ստույգ ժամանակը հայտնի չէ: Կազմողը թվագրել է 1936: Կարծում ենք բանաստեղծն այն գրած պետք է լինի նոյեմբերի 16-ից անմիջապես հետո, երբ նրան ենթարկեցին հարցաքննության և մինչև դեկտեմբերի 6-ը, երբ սկսեց գրել հիշյալ տետրապտիքոսը:

Տետրապտիքոսի մեջ Չարենցն արդեն այլ է: Եթե նախորդ գործում, խոսքն ուղղելով Առաջնորդին, նա հիշեցնում էր, որ առաջինը ինքը երգեց գովաբան Այգաբացի, այսինքն՝ հեղափոխության, և զառանցանքի պես անհեթեթություն է համարում ժամանակի ընթացքից իրեն դուրս թողնելու մտայնությունը, ապա այստեղ արդեն ամեն ինչ փոխվում է: Չարենցը, նախ, Նարեկացու պես խոսքն ուղղում է Արարչին (և ոչ թե Առաջնորդին) և պարզ ու որոշակի հայտարարում, որ Այգաբացը դարձել է արյունալիճ Մայրամուտ, և որ հեղափոխության ըղձյալ գաղափարները գլխատվում են: Ահա տետրապտիքոսի առաջին սոնետը.

Ինչպես դարեր առաջ - վկան Նարեկացի,-
Քեզ եմ հղում ես ողբըս, ո՛վ Արարիչ,
Ես՝ մեղսավոր քերթողըս աստվածարյալ դարի,-
Ողջակիզյալ արյունս վարակածին...

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,-
Ուր մեր Ա՛րևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Բորբ աչքերում սակայն հավատացյալ բյուրոց
Ծովածավալ արյան ցոլքը շառայլածին -
Ցոլանում է, իբրև ցոլք ցնծության մերո:-

Եվ-արեգակն է հին վերադառնում դարձյալ
Արևմուտքից՝ ինչպես մահվան նաշից հառնած
Ղազարեի նման - արևը ետ դառնա...:²¹

Այս ոգին, Արարչին դիմելու այս պաղատանքը՝ «Ինչպես վկան մեր հին՝ Նարեկացին», Չարենցը շարունակում է նաև այս տետրապտիքոսի մյուս սոնետների մեջ: Երկնային հավատի առջև Չարենցն ստեղծում է իր նյութեղեն,

²⁰ **Չարենց** 1983, 123:

²¹ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65: **Չարենց** 1983, 195-198-ում տպագրված է վրիպակներով:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

Երկրային կերպարը, որպես մի նոր վկա: Ուրեմն՝ Նարեկացին հանդես է գալիս որպես «հին վկա»՝ ձայնը Աստծուն ուղղած, իսկ ինքը՝ «նոր վկա», որի ուղեկիցն է նյութն ու երկրային հավատը: Երկնային Աստծու դիմաց երկրային աստվածը՝ Մարդը.

Իբրև մի նո՛ր վկա՝ վաղո՛ւց աստվածարյալ՝
Ես՝ երկրային՝ երկրի՛ն լոկ հավատացի,-
Չկամեցա՛, Աստված - ես՝ ինձանից բացի,-
Ոչ գոյություն՝ ինձ պե՛ս գեթ կատարյալ:

Ես անսացի միայն իմ հանճարի ձայնին:-
Ճանաչեցի լոկ նյո՛ւթն՝ ինքնարարիչ,-
Եվ՝ հանճարիս ուժով՝ ենթարկեցի այն ինձ:²²

Եվ այսքանից հետո ահա նրա ճակատագիրը.
Եվ - թունավոր ինքյան, որպես կարիճ՝
Ահա կանգնած եմ - զուրկ անգամ դժնի՛ հացից,-
Եվ կախված է գլխիս - մի արեգնացյալ Կացին:²³

Հաջորդ սունետում Չարենցն արդեն խոսում է իր երկրային հավատի կորստի մասին: Հիմա արդեն միակը, որին, ինչպես Նարեկացին կարող էր դիմել, Տերն է՝ Արարիչն անծին.

Եվ ես – տխո՛ւր, ինչպես վկան Նարեկացի՝
Ե՛վ զարհուրյալ այնպես, և՛ մենակյաց՝
Չարհուրելի կյանքի հանդեպ անօգ կանգնած՝
Ես ո՛ւմ դիմեմ, ո՛վ Տեր,- արդ՝ Քեզանից բացի:

Ինչո՞ւ այսպես անօ՛գ ես մնացի,
Եվ այնքան բորբ՝ հանկարծ անվերադարձ հանգավ,-
Անդըրդվելի հավատս՝ դեպի գալի՛քն անգամ,
Եվ ինձ գերող ներկան-դարձավ անծիր:

Եվ ներբողներս՝ հղած ծագող այգաբացին,-
Արեգակին՝ և՛ իմ, և՛ իմ արյամբ առկայծ,-
Ողբ ու տրտունջ դարձան և փոխվեցին լացի:

²² Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65:

²³ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65:

Գասպարյան Դ.

Կյա՞նքն եմ մեռած արդյոք ոգեկոչում դարձյալ,-
Երազելով, որ այն վերադառնա՝
Ղազարոսի նման՝ մահվան նաշից հառնած:²⁴

Հավատի կորստի տողերն ունեն նաև այսպիսի տարբերակներ. «Եվ անսասան հավատն իմ - անվերադարձ հանգավ // Անդրդվելի հավատն իմ հանդեպ արյամբ անգամ // Եվ ոչ խոսքով միայն ներթողածի»:²⁵

Հիշենք, որ Ղազարոսի հարության մասին տաղեր էր գրում նաև Նարեկացին: Նոր մահացած և թաղված Ղազարոսին Քրիստոսը հարություն է տալիս. «Ղազարէ, արի ե՛կ արտաքս»:²⁶ Այդպես էլ մահվան տագնապների մեջ գտնվող բանաստեղծն էր մտածում, թե մեկը պիտի գա և ասի. Չարենց, դո՛ւրս արի նաշից: Չարենցն ամբողջությամբ տրվում է արարչական շնչին, ազատագրվում երկրայինից, նյութից, իր գովերգած հեղափոխությունից, որին, ահա, արյամբ է վճարում, վերամարմնավորվում որպես մի նոր Նարեկացի և փրկություն հայցում Արարչից: Դրա արտահայտությունն է ամբողջ չորրորդ տունետը.

Քե՛զ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին՝
Հղում եմ ողբըս Քեզ՝ սրտիս խորքից,-
Ինչպես շյուղն է հղում շունչն իր Նորքից –
Իբրև տեսիլք՝ հեռվում հառնած Արագածին..

Ինչպես դողդոջ մի շյուղ բարակածիլ՝
Մի երգեցիկ ցողուն - – օվկիանում բերքի՝
Ես դաշտերում անծի՛ր իմ հրկիզյալ Երկրի,-
Արձագանք չեմ լսում իմ երգածի...

Բայց ես գիտեմ, որ դու՝ շնչով ստեղծարար,
Ինչպես անձրև վարար՝ անեզրական արտում,-
Ո՛չ մի մժեղ կամ շյուղ – չես թողնելու ծարավ...

Ես - երգեցիկ եղեգ, - ինչո՞ւ այսքան տրտում
Պիտի դողամ լույսիդ անեզրության հանդեպ,-
Երբ երբեք չե՛ս եղել դու այդքան նենգ....²⁷

²⁴ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65:

²⁵ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65:

²⁶ Նոր կտակարան, 1981, 286, ԺԱ: 44:

²⁷ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, № 65:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

Ահա, Նարեկացին, ինչպես «անեղծ վկա», Չարենցին առաջնորդում է դեպի Արարիչ: Արարչամերժ (իր բառն է) բանաստեղծը դառնում է Արարչապաշտ. ոգին փրկվում է, բայց մարդը դատապարտված էր գամվելու ժամանակի և իրականության խաչափայտին: Չարենցը խաչվում է ոգեփրկության ճանապարհի հենց սկզբում:

Տարբերակներից մեկում²⁸ Չարենցն իր ժամանակը համարում է «անհավատ դար», իրեն՝ «կարմրակեզ» երգիչ, Արարչի լույսին անգետ, ով, ահա, հավատի է գալիս, ինչը նախկինում համարել է սոսկ «նայիվ միֆ»: Ավելանում է նաև Անառակ որդու վերադարձի առակը. ինքը՝ Չարենցը, ներկայանում է հայրենական երգի հայրական տուն վերադարձող անառակ որդու կերպարանքով:

Նարեկացու ավանդույթը Չարենցի ստեղծագործության մեջ արթնացավ նաև իմաստավոր բաղաձայնայնության կիրառությամբ: Ինչպես ժողովրդական լալաց երգերով Նարեկացին էր իր խոսքը դարձնում ավելի հուզիչ ու ներգործող, այդպես էլ իր ողբերգական ճակատագրի սրտահույզ ապրումները Չարենցն արտահայտեց «մ» և «կ» հնչյունների բաղաձայնայնությամբ, որոնցից «մ»-ն մահն էր գուժում, իսկ «կ»-ն՝ կացինը, արեգնացյալ կացինը, որ կյանքի կեսօրին կարմիր հագած դահիճը կախել էր բանաստեղծի գլխին: 1937 թ. մայիսի 26–28-ին գրում է «Մայրամուտ» շաբթի «Մառ՝ մորմոքում է մայրամուտը» տրիոլետը: Մի քանի տարբերակով գրում է մ տառերի խտացումով մահվան մրուր մաղող «Մայրամուտը» վերնագրով նույնահունչ այլ գործեր՝ «Մառ՝ մորմոքում է Մայրամուտը», «Մխում է մարխը: Մգլահոտ է...», «Մթնում է. մոտ է մայրամուտը...»:

Մահվան թանձր ու անորոշ մշուշը 1936-ի հուլիսի 9–ից՝ Ա. Խանջյանի սպանությունից հետո, ծանր նստել էր նրա հոգուն: Այս ընթացքում «մահ» բառը հաճախակի կարելի է հանդիպել նրա ստեղծագործության մեջ, որ վերածվում է մայրամուտի երգերի՝ «Մայրամուտի երգ», «Մայրամուտներ», «Մայրամուտային I», «Մայրամուտային II»: «Մ» հնչյունների կուտակումով ստեղծվում է մահվան մղձավանջ, մահերգ ու մշուշ: Ահա նարեկյան ողբալիցքով «Մայրամուտ» տրիոլետը.

Մառ՝ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,—
Մեռնում է մութը մթնշաղում,—
Մառ՝ մորմոքում է մայրամուտը:—

²⁸ Տես՝ **Չարենց** 1983, 586:

Գասպարյան Դ.

Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,—
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում...²⁹

Նույն կերպ 1936–1937 թթ. Չարենցը ստեղծում է «Կ», «Վ» հնչյունների բաղաձայնությամբ՝ «կաս-կարմիր», «կացին», «կարմրածուփ կեսօր», «կախաղան», «կալանք» «կարմրագրահ կափարիչ» «կաս կաթսաներ» բառերի շեշտադրությամբ նա թանձրացնում է մահվան երանգները («Իմ կեսօրին», «Կեսօր»): «Վ» հնչյունների կուտակումը՝ ոսկևորիկ վաղորդայինին հակադրում է «Վահր ու վրեժ, ռի ու վարակ» («Վաղվաղակի վառել ես վառ», կա մի քանի տարբերակ): Մ, վ, կ տառերի՝ բաղաձայնությամբ պարունակող բանաստեղծություններում շեշտում է մութն ու մահը, կարմիր կեսօրը: Առանձին թղթերի վրա գրում էր կ հնչունով բառեր, որպեսզի օգտագործեր բանաստեղծության մեջ:³⁰

Չարենցը քրիստոնյա հավատացյալ ընտանիքի զավակ էր: Ամեն օր քնելուց առաջ նրա հոր ձեռքին Աստվածաշունչն էր: Ինքը՝ որպես անառակ զավակ, հեռացավ հորից էլ, Աստվածաշնչից էլ: Բայց վերջում իր անցած ճանապարհի տրամաբանությունից խաբված՝ վերադարձավ դեպի հայրն ու դեպի Աստված: Հորը տեսավ Կոմիտասի կողքին և կերտեց նրա կերպարը, Աստծուն տեսավ Տիրոջ պես կանգնած իր գլխին և նրան ուղղեց իր սրտի խոսքը:

Դարանակալ մահվան զգացողությամբ Պ. Դուրյանը «Տրտունջ»-ում գրում էր. «Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...// Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արդեն»:³¹ Նույն հոգեխռովքով Չարենցն ավելացնում է. «Բայց, ա՛խ, քրքջացել է կյանքը երեսիդ,— // Եվ երգը տվել է քեզ թույն միայն, սի՛րտ»:³²

Չարենցը արյան հարազատությամբ յուրացրել է Նարեկացու արվեստը: Իրավացի էր Պ. Սևակը, ըստ որի՝ Նարեկացու վարպետությունն ու գեղարվեստական արտահայտչականությունն «...Այնքա՛ն բացառիկ, է որ այն <...> ոչ միայն հայ գրականության մեջ ոչ ոքի կողմից չի գերազանցվել, այլև ոչ ոք, բացի Չարենցից, չի կարողացել անգամ մոտենալ նրան»³³: Դա, իրոք,

²⁹ Չարենց 1983, 247, նաև՝ Չարենց 1996, 126:

³⁰ Տես՝ Չարենց 1996, 449–450:

³¹ Դուրյան 1981, 62:

³² Չարենց 1983, 251:

³³ «Дружба народов», 1964, № 6, 234:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

այդպես է, և Չարենց-Նարեկացի կապն ավելի տարողունակ հետազոտության պահանջ ունի:

1935-ին Չարենցը դասախոսել է գրողների միությանը կից գործող գրական ստուդիայում: Անդրադարձել է նաև Նարեկացուն: «Վերստին յաւելւած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի» խորագրի մեջ հսկող բառը բացատրել է որպես Գրիգոր, ասելով, որ Գրիգորիոս հունարեն նշանակում է ոչ միայն Արթուն, այլև Հսկող: Այս կրկնվող խորագրով Նարեկացին ակնարկել է իր գրած գլուխները, իսկ այն գլուխները, որոնք չունեն այն (Ա, ՂԲ, ՂԳ) գրել է նրա ավագ եղբայր Հովհաննեսը, ինչի մասին Նարեկացին ակնարկում է հիշատակարանում: Մեր կողմից ավելացնենք, որ ՂԲ, ՂԳ գլուխները հավանական են, բայց Ա գլուխը բացառվում է: Դրանք քիչ են և ունեն դավանաբանական բովանդակություն: Չարենցը հղումներ է արել «Մատենան...»-ին՝ «Յաւազանէ կոչեցայ Արթուն <...>: Ի փրկութեան աւուր Հսկող յորջորջեցայ» (ՀԲ, ի): Փրկության ավուր ասելով՝ ըստ Չարենցի՝ Նարեկացին նկատի է ունեցել «Մատենան...»-ի գրության ժամանակը, իսկ իրականում փրկության ավուրը մկրտության ժամանակն է:

Նարեկացու ողբերգության մատյանը Չարենցը կապել է Խորենացու «Ողբ»-ի հետ, ծագումնաբանորեն բխեցրել դրանից:³⁴

1937 թ. մարտին, հավանաբար իր ծննդյան օրվա կապակցությամբ, մի քանի տարբերակով և վերնագրով («Լերան աղոթքը», «Չարչարանաց լեռան աղոթքը») գրում է «Իմ լերան աղոթքը» պոեմը: Հայացքը Աստծուն՝ ի մի է բերում «Քառասնամյա կյանքի» ճանապարհը.

Շնորհապարտ եմ, Տե՛ր, ես առավել սակայն,
Որ կոչեցիր դու ինձ ոչ սոսկական քերթող,–
Այլ ասպետ և պետ, և զինակիր
Եվ սերմնացան աննինջ՝ դժնի ժամանակի:

<...> Ո՛վ դու, որ պետ ես կարգել ինձ՝ տարերքին անդեմ,
Կույր տարերքի ու նյութի տենդը կաշկանդող,–
Տո՛ւր զորություն լինելու, – ինքս իմ դեմ անդող,
Մութ ինքնությունը նյութի ձևով կաշկանդող:³⁵

³⁴ Տե՛ս «Չարենցի հետ: Հուշեր», 2008, 363–372:

³⁵ **Չարենց** 1983, 377, 385:

Գասպարյան Դ.

Բանաստեղծն օգտագործում է «Որ բարբառեն ազնիվ և գեղգեղեն ձեռամբ», «Որք – կկերտեն ոգով և որք «կերգեն ձեռամբ...»»³⁶ արտահայտությունները, որոնց աղբյուրը Աստվածաշնչի «Գիրք թագաւորաց»-ն է՝ «Դաւիթ երգեր ձեռամբ իւրով» (Եբրայերեն բնագրում՝ «Դավիթը կիթառ էր նվագում»), և Խորենացին՝ «Ձի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ»: Ձեռքով երգել նշանակում է՝ ձեռքով նվագել:³⁷

Եզրակացություններ

Չարենցի ստեղծագործական աշխարհը մի ամբողջ փոթորկոտ օվկիանոս է: Ինչ էլ գրեր՝ ելակետը ժամանակն էր, Հայրենիքն էր և Ինքը՝ իր անձնական կյանքն ու հոգու գաղտնիքը: Համապարփակ հանճարով տոգորված նրա խոսքը կենդանի պատմական ու վավերական արվեստ է, այդ իսկ պատճառով չի հնանում:

Այդ համապարփակ ընդգրկման մեջ կյանքի վերջին տարիներին հայտնվեցին ու հաստատվեցին հայրենի հանճարներ Կոմիտասն ու Նարեկացին, արթնացավ միջնադարը՝ տաղերով ու խորհուրդներով, Գրիգոր Խլաթեցի Ծերենցի և հայ դպրության մյուս մեծությունների կերպարներով: Այս ճանապարհով Չարենցը գնաց իր Աստծուն ընդառաջ: Հավատարացության, աստվածամերժության, կարմիր կնունքի ու բոլշևիկյան պատարագների ամենաթեժ տարիներին, երբ քանդվում էին եկեղեցիներ ու տաճարներ, այրվում էին Ավետարաններ ու բռնադատվում էին հոգևորականներ, Չարենցը գնաց իր աստծվածաորոնման ճանապարհով և խոսքով կառուցեց իր հոգևոր տաճարը:

Նրանք, ովքեր Չարենցին ճանաչում են դպրոցական գիտելիքներով և որոնց գիտակցության մեջ Չարենցը գրանցված է սոսկ որպես հեղափոխության բանաստեղծ, առաջին պահին կոճվարանան նրան տեսնել հոգևոր ոլորտներում: Բայց նրա պես համապարփակ հանճարի ուժն առաջին հերթին գաղափարական և գեղագիտական շարժման ու փոփոխությունների մեջ է. երեկվա պահանջներն այլ էին, այսօրվանն՝ այլ, արտաքուստ դրանք տարբեր են, բայց ներքուստ շատ միասնական, որովհետև միևնույն հոգևոր անհատի կյանքի պատմությունն են:

Չարենցը տեսավ ու հասկացավ, որ իր ողջունած ըղձյալ այգաբացը՝ հեղափոխությունը, երեկվա հեղափոխականների ձեռքով իսկ դառնում է ար-

³⁶ **Չարենց** 1983, 377, 381

³⁷ Տե՛ս **Աբգարյան Գ.**, «Մի հոդվածի աղթիվ», «Գրական թերթ», 1986, № 50:

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

յունալիճ կեսօր ու արեգնացյալ կացին, որ տեսակն սկսել է տեսակին հոշոտել, մի բան, որ կա միայն հանրային կյանքում, բայց ոչ բնության մեջ: Եվ նա հիասթափվեց ոչ թե հեղափոխությունից, այլ հեղափոխության գաղափարներն այդպես աղավաղողներից, նրանցից, ովքեր բազմաձև ցարերի գահին՝ որպես համադաշնություն հանդես եկող մի ամբողջ երկիր մատնել էին բռնության ու գաղափարական ստրկության: Չարենցը տեսավ իր իդեալների խորտակումը, որպես մեկը, ում վրա փլվել էր այդ մահացու կառույցը, փորձեց մխիթարություն որոնել հոգևոր բարձր արժեքների մեջ, որոնք նրան հասցրին Բարձրյալի գաղափարին, ով Տեր է և Աստված:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Գ. 1986, Մի հոդվածի առթիվ, «Գրական թերթ», № 50, 12.12.1986, («Grakan tert», 1986, 12 dektember, № 50). “Literary Newspaper”, 1986, December 12, № 50 (in Armenian).

Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1616 էջ: (**Aghayan E.**, 1976, *Ardi hayereni batsatrakan bararan*, Yerevann, «Hayastan», 1616 e’j.) **Aghayan E.**, 1976, *Modern Armenian Explanatory Dictionary*, Yerevan, “Hayastan”, 1616 pages (in Armenian).

Առաքել Բաղիշեցի 1971, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, աշխատասիրության մ. Ղազինյանի, 352 էջ: (**Arakel Baghishetsi** 1971, Yerevan, GA hratarakchutyun, ashkhatas, irutyamb A. Ghazinyani) **Arakel. Baghishetsi** 1971, Yerevan: Publishing House of the Academy of Sciences, 352 pages. Edited and prepared for publication by A. Ghazinyan.

Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, N 65: (*Grakanutyan ev arvesti tangaran, Charentsi fond*, № 65). Charents Museum of Literature and Art, Charents Collection, № 65 (in Armenian).

Դուրյան Պ. 1971, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 368 էջ: (**Duryan P.** 1971, *Erkeri zhoghovadsu*, Yerevan, GA hratarakchutyun, 368 e’j). **Duryan P.** 1971, *Collected Works, Vol. 1*, Yerevan, Academy of Sciences Publishing House, 368 pages.

Նոր կտակարան 1981, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 712 էջ: (*Nor ktakaran* 1981, *Mayr ator Surb Edjmiadsin*, 712 e’j). *New Testament* 1981, *Mother See of Holy Etchmiadzin*, 712 pages (in Armenian).

Չարենց Ան. 1978, Չարենցի ձեռագրերի աշխարհում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 180 էջ: (**Charents An.** 1978, *Charentsi dzeragreri ashkharhum*, GA hratarakshutyun, 180 e’j). **Charents An.** 1978, *In the World of Charents' Manuscripts*, Yerevan, Academy of Sciences Publishing House, 180 pages (in Armenian).

Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, ԳԱ հրատարակչություն, 712 էջ: (**Charents E.** 1983, *Antip ev tshavaqhvars erker*, Yerevan, GA hratarakchutyun, 712).

ԳԱՍԱԿԱՐՅԱՆ Դ.

Charents E. 1983, Unpublished and Uncollected Works, Yerevan, Academy of Sciences Publishing House, 712 pages (in Armenian).

Չափենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 496 էջ: (**Charents E.** 2017, *Girk mnacsordats, «Tigran Mets», 496 e'j*). **Charents E.** 2017, *Paralipomenon (Chronicles)*, Yerevan, "Tigran Mets", 496 pages (in Armenian).

Չափենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, ԳԱ հրատարակչություն, 626 էջ: (**Charents E.** 1968, *Erkeri zhoghovadsu, h. 4, Yerevan, GA hratarakshutyun, 626 e'j*).

Charents E. 1968, Collected Works, Vol. 4, Yerevan, Academy of Sciences Publishing House, 626 pages (in Armenian).

Չափենց Ե. 1986, Նորահայտ էջեր, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 636 էջ: (**Charents E.** 1986, *Norahayt edjer, Yevani hamalsarani hratarakchutyun, 636 e'j*). **Charents E.** 1986, Recently Discovered Pages, Yerevan, Yerevan State University Publishing House, 636 pages (in Armenian).

«Չափենցի հետ: Հուշեր», 2008, Երևան, «Նաիրի», 438 էջ: («*Charentsi het. Husher*», 2008, Yerevan, «Nairi», 438 e'j). With Charents: *Memoirs*, 2008, Yerevan, "Nairi", 438 pages (in Armenian).

«Дружба народов», Москва, 1964, № 6. *Druzhba Narodov, Moscow, 1964, № 6 (in Russian)*.

DAVID GASPARYAN

Doctor of Philology, Professor

Institute of History NAS RA

grakanagetgasparyan@gmail.com

0009-0004-7317-4535 

THE RETURN OF THE PRODIGAL SON OR YEGHISHE CHARENTS UNDER GOD'S GAZE

Summary

Yeghishe Charents came to the idea of God through the revolution, the efforts to save the homeland, and the literary-political struggle. He traversed this path, immersing himself in spiritual realms where Komitas was, where the figures of Armenian and world literature stood – Grigor Khlatetsi (Tserents) and Grigor Narekatsi, Shakespeare and Dante...

Charents the son of the Muses, sometimes even appearing like a Prodigal Son, knew very well that "There is no path straight from suffering." Having

Անառակ որդու վերադարձը կամ՝ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո ...

gone through a lifetime of difficult trials, falling down and rising again, he went to meet God, carrying his cross. Instead of the vinegar offered to Jesus on a sponge, he, isolated in Yerevan prison, drank the bitter, strong infusion of tea that he had brewed himself, and on his lips were the same words of the crucified Savior: “Lord, do not forsake me.” And the Lord did not abandon him. The One who gave him the joy of the Nativity and the Annunciation also granted him the miracle of the Resurrection and the Rebirth...

Keywords: *Yeghishe Charents, Komitas, Grigor Khlatetsi (Tserents), Grigor Narekatsi, God, Lord, faith.*